# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«28» օգոստոսի 2019 թվականի N 19

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի՝ 28-ի հերթական՝նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
2.Ջրաշեն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:
3.Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Կարապետ Ռուսսյան | | | |
| 2.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 3.Մացակ Ռուսսյան | | | |
| 4.Ժորա Մկրտչյան | | | |
| 5.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » օգոստոսի 2019 թվականի N 20 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5 -րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից Ջրաշեն համայնքի ավագանին՝

*որոշում է.*

1.Համայնքի 2019 թվականի բյուջեի 04 դասի 05 խմբի 01 կարգի 900242271022 (ճանապարհային տրանսպորտ) հաշվի 5113 հոդվածով նախատեսված 41900.0 հազար դրամից հանել 2000.0 հազար դրամ և 06 դասի 04 խմբի 01 կարգի 900242821016 (փողոցների լուսավորում) հաշվի 5112 հոդվածով նախատեսված 8000.0 հազար դրամից հանել 1000.0 հազար դրամ և տեղափոխել 04 դասի 05 խմբի 01 կարգի 900242271022 (ճանապարհային տրանսպորտ) հաշվի 5112 հոդված՝ հեղեղապատնեշ կառուցելու նպատակով:

- 06 դասի 04 խմբի 01 կարգի 900242821016 (փողոցների լուսավորում) հաշվի 4212 հոդվածով նախատեսված 200.0 հազար դրամ հանել և տեղափոխել 01 դասի 01 խմբի 01 կարգի 900242211028 (կառավարման ապարատ) հաշվի 4212 հոդված՝ համայնքում փողոցների լուսավորման նոր ցանց կառուցելու նպատակով, էլեկտրաէներգիայի կատարված ծախսերը ժամանակին վճարելու համար:
- 09 դասի 01 խմբի 01 կարգի 900242099027 (նախադպրոցական կրթություն) հաշվի 4511 հոդվածով նախատեսված 8000.0 հազար դրամից հանել 1500.0 հազար դրամ և տեղափոխել 09 դասի 02 խմբի 02 կարգի 900242481019 (միջնակարգ ընդհանուր կրթություն) հաշվի 4637 հոդված՝ որպես դրամաշնորհ <<Ջրաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին:

2.Ֆինանսական ծախսերի կատարման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Կարապետ Ուռուսյան | | | |
| 2.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 3.Մացակ Ուռուսյան | | | |
| 4.Ժորա Մկրտչյան | | | |
| 5.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » օգոստոսի 2019 թվականի թիվ 21

### ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Ջրաշեն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելուն՝ համաձայն հավելվածների:

2.Աճուրդում հաղթող մասնակիցներից համայնքի բյուջե գանձել հողամասերի չափագրման և պետական գրացման ծախսերը:

ՑԱՆԿ
ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

| Լոտ | Հողամասի հասցեն | Ծածկագիրը | Մակերեսը հա | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | գ.Ջրաշեն 1Փ. 39/2 | 06-095-0071-013 | 0.01513 | Բնակավայրերի | հասարակական կառուցապատման | հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու | 33300 |
| 2 | գ.Ջրաշեն 1Փ.41/3 | 06-095-0073-0011 | 0.015 | Բնակավայրերի | հասարակական կառուցապատման | հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու | 33300 |
| 3 | գ.Ջրաշեն 1Փ. 37/1 | 06-095-0069-0028 | 0.02 | Բնակավայրերի այլ | - | - | 44400 |

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| 1.Կարապետ Ռուսյան | | | |
| 2.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 3.Մացակ Ռուսյան | | | |
| 4.Ժորա Մկրտչյան | | | |
| 5.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » օգոստոսի 2019 թվականի թիվ 22-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Կարապետ Ռուռույան | | | |
| 2.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 3.Մացակ Ռուռույան | | | |
| 4.Ժորա Մկրտչյան | | | |
| 5.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ